

ԹԱԴԵԻՈՍ ՏՈՆՈՅԱՆ

բ.գ.թ., դոցենտ

**ԲԱՆԻ ԵՒ ՆԱՅԻ ՆԱՄՈՆԿԱՆՈՒՄԸ,
ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ**

Ինչպիսին խոսքն է, այնպիսին քաղաքակրթական գոյությունն է, լինելությունը, կյանքը: Գոյության հիմքը հացն է: Ինչպիսի՞ն է կենսաբանական գոյության խարսխի՝ հացի եւ քաղաքակրթական գոյության խարսխի՝ խոսքի փոխհարաբերությունը հայ լեզվամրաժողովության մեջ:

«Նացի խնդիրը» հայ գրողի (Պերճ Պոռշյան, Նար-Դոս, Վիլյամ Սարոյան, Վահագն Դավթյան, Նամո Սահյան, Նրանտ Մաթևոսյան եւ այլք) սրեղծագործության մեջ միշտ այս կամ այն կերպ արծարծվել է: Այդ արծարծումը խարսխվել է գոյության կռվին, սակայն ֆիզիկական գոյության հարցը չի բաժանել բարոյականության (որ քրիստոնեականն է), այսինքն՝ քաղաքակրթական լինելության խնդրից: Ֆիզիկական գոյության հիմքը հացն է, հոգևոր-քաղաքակրթական գոյության հիմքը՝ բանը (խոսքը, տեքստը): Մրանք նույն կյանքի ընկալման տարբեր բեկումներն են, որ հաճախ որպես հակադրություն են ի հայտ գալիս, իսկ գեղարվեստական տեքստերում դրանց հակադրությունը մինչև իսկ թշնամական է, քանի որ գեղարվեստական մրաժողության մեջ քաղաքակրթական գոյության փրկույթը այս երկու «հաց»-երով է ամբողջանում, եւ դրանցից յուրաքանչյուրի «աշխարհագրությունն» ընդլայնվում է բացառապես մյուսի հաշվին. մեկի շարությունից պակասում է մյուսը, առաջինի պակասությունից՝ ավելանում երկրորդը: Սկսած տերունական աղոթքից, որի մեջ ֆիզիկական գոյությունն ապահովող հացն այնքան քիչ է, որ այն խնդրելու կարիքը «հանապազորդ» է եւ զուգահեռվում է պարտքերը ներելու բարոյականությանը («որպես եւ մեր թողումը մերոց պարտապանաց»), այսինքն՝ հոգևոր հացին, վերջացրած արեւի տակ վայրագ պայքարի պոռշյանական խնդրով՝ հայերենի տեքստային տարածքը կարծես անընդհատ փորձում է լուծել «հացի խնդիրը»: Այս խնդրում հայերենի լեզվամրաժողական համակարգն անչափ ճկուն է, եւ դրա վկայությունն այն է, որ հայերեն տեքստը կարողացել է սրեղծել հացի ընկալման եւ՝ պարմական (քրոնիկ), եւ՝ վերապարմական (վերժամանակային) մակարդակներ: Այս երկու մակարդակները դրսևորվում են հարկապես հայերեն չափածո տեքստերում եւ,

բնականաբար, այն փրկարարություն, որոնք բանահյուսական են (այսինքն՝ ժողովրդական մրաժողության ռիթմն ու չափն են կրում):

Քանի որ ընդհանրապես գոյությունը հայերենի համափրկարար առնչում է ձայնին (հիշենք, թե ինչպես է Ձենով Նովանի ձայնը վերակենդանացնում քառասուն գազ խորը մահվան փոստում հայրնված Դավթին՝ որպես արյան կանչ), իսկ մասնավորապես քաղաքակրթական գոյությունը՝ երգին, բանաստեղծությանը՝ լայն առումով, ապա, բնականաբար, հացը (որպես գոյության պարպաղի ճախապայման, իսկ քաղաքակրթական գոյության՝ պարպաղի ճախապայմաններից մեկը) պետք է որ հոմանշային համընկալման մեջ լինի ձայնի, խոսք-փրկարարի, երգի և արյան հետ: Այս առումով մինչև Դանիել Վարուժանի «Նացին երգը» ժողովածուին անցնելը գայթակղիչ է թվում Միսաք Մեծարենցի վերջին բանաստեղծություններից մեկը հիշելը, բանաստեղծություն, որը որոշ փոփոխությունների համաձայն՝ արդեն մահվան մահճում, չկարողանալով ինքնուրույն գրել, հեղինակը ուրիշի է թելադրել¹: Դա «Երգ» բանաստեղծությունն է, որ կարծես ոչ թե Մեծարենցին պետք է լիներ, այլ հենց Վարուժանին, քանի որ իր խոսքային ռիթմով, բանաստեղծական հույզերի ու կրքերի աշխարհագրությամբ այն ավելի շարժված է, քան մեծարենցյան: Այդ բանաստեղծությունից փափորություն ես սրանում, թե Մեծարենցը կարծես հասնում է բանաստեղծության այն «երկրամասին», որի իշխանը Վարուժանն է, և եթե չարանենգ մահն աշխարհից չիսեր Մեծարենցին, հայոց բանաստեղծության հիշյալ փարածքում երևի թե անսովոր մի իրավիճակ՝ երկիշխանություն սկսվեր:

Մեծարենցի «Երգ» բանաստեղծությունը հացը (ցորենը) ձայնի, արյան (կյանքի) հետ լեզվամրաժողական հոմանիշությամբ է միավորում.

Քոյր, մութեցի՛ր նրվագին,
Երգե՛ր դաշտերն ու ցորյան,
Զի ամեն բան ինձ կրկին
Ար դարձնեն ձայնն արյան²:

Ամենուին բռնագրոսիկ չէ Վարուժանի առիթով մեր անդրադարձը Մեծարենցի «Երգ» բանաստեղծությանը:

Նախ ուզում ենք շեշտել, որ իր բանաստեղծությունը «Երգ» վերնագրելով՝ Մեծարենցը ներքին մղում է ունեցել շեշտելու զգացմունքային-հոգեկոտր ուժերի այն համախմբումը, որ անհրաժեշտ է ընթերցողի (կամ լսարանի) վրա առավելազույն ազդեցություն գործելու համար: Իսկ այն հոգեբանական-ճակատագրական պահը, որի մեջ ստեղծվել է այս բանաստեղծությունը (հիվանդ բանաստեղծին հաշված ժամեր են մնում կյանքին հրաժեշտ փալու, և նա կարիք ունի ասելու իր վերջին, թերևս ամենակարևոր խոսքը՝ ակնկալությամբ, որ այն չի մոռացվի,

1 Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, 1981, էջ 399-400:

2 Անդ, էջ 190:

ավելին՝ կհիշվի ու կկրկնվի, ինչպես երգը, որի վրա խառսխվում են գոյության (ձայն) քաղաքակրթական երկու մակարդակները՝ փեքսպ-խոսքը և զգացմունք-երաժշտությունը: Վարուժանի «Ձոն»-ը նույնպես երգ է, քանի որ, ինչպես կրես-նենք քիչ հեպո, այն նույնպես երգի վերոնշյալ խորհուրդն է կրում:

Բացառիկ է այն ընդհանրությունը, որ, հիշյալ երգայնությունից զար, կա Մեծարենցի «Երգ»-ի և Վարուժանի «Յեղին սիրտը» գրքի «Ձոն»-ի միջև. խոս-քը վերաբերում է նույն խնդիրների արծարծմանը և դրանք լուծելու լեզվական միջոցների նույնությանը:

Երկու բանաստեղծությունների մեջ էլ նույն կրակն է՝ «Քոյր, մոտեցի՛ր **կրա-կին**» (Մ. Մեծարենց) - «Ձեզի ընծա՛, **կրակի** գոհեր, Ընդ եղեգան փող բո՛ց ելա-ներ» (Դ. Վարուժան), նույն ծուխը՝ «**Ծըխ**ն փրեւն այս բուրյան» (Մեծարենց) - «Ընդ եղեգան փող **ծո՛ւխ** ելաներ» (Դ. Վարուժան), նույն արյունն է՝ «**Նորն արյան**», «**համն արյան**», «**գույնն արյան**», «**ձայնն արյան**» (Մ. Մեծարենց) - «Եղեգնյա գրչով երգեցի **արյուն**» (Դ. Վարուժան), նույն վրեժն է՝ «**Ջի ամեն բան ինձ կրկին Կը հիշեցնէ Վրե՛ժն արյան**» (Մ. Մեծարենց) - «Եղեգնյա գրչով **վրեժ** երգեցի» (Դ. Վարուժան):

Սրանք դեպի նույն ենթատեքստը մղող հայերենի համապատասխան այն ընդհանրություններն են, որոնց համապեղ ի հայտ գալուն նպաստում են նույն կամ նման, նեղանձնական կամ հանրային կյանքում վճռորոշ, ճակատագրա-կան, բարձրակետային իրավիճակները: Ճիշտ է, առաջին հայացքից կարող է թվալ, թե մեծարենցյան այս երգը միայն նեղանձնական է, իսկ վարուժանական ձոնը՝ ընդհանուր-ցեղային, և գուցե դա նույնիսկ ավելի շար հենց այդպես է, բայց Մեծարենցի «Երգ»-ի ավարտը՝ վերջին փողը՝ արյան վրեժով, ոչ այլ ինչ է, քան փեքսպային սուբյեկտիվության անցում համապատասխան ընդհանուր լեզվամտավորական միջավայր. հայերենի համապատասխան Մ. Մեծարենցի այս «Երգ» բանաստեղծության վերջին փողում կարողանում է իր վերահսկողության փակ առնել մեծարենցյան փեքսպը՝ անձնականից այն փոխադրելով ազգային-հանրային ոլորտ:

Եթե մենք պնդում ենք, որ հայերենի համապատասխան հացը և խոսքը (փեքս-պը, երգը) հոմանիշային համընկալումներ են, բնականաբար և փրամաբանո-րեն մենք պարտավոր ենք հաստատել, որ այս երկու բանաստեղծությունների միջև ընդհանրություն-նմանություն կա նաև հացի խորհրդի ընկալման առու-մով: Ահավասիկ Մեծարենցի «Երգ»-ի՝ այդ առումով մեզ անհրաժեշտ փողերը՝

Քոյր, մոտեցի՛ր նվագին,

Երգն՝ դաշտերն ու ցորյան...³:

Եթե մեզ հաջողվի Դ. Վարուժանի գրով վկայել, որ, իրոք, հացը և բանը

³ Անդ:

(տեքստը, խոսքը, երգը) նրա տեքստի (այդ կերպ նաև հայերենի) լեզվամրաժողական կառույցում համընկալում-հոմանիշներ են, ապա կկարողանանք պնդել, որ «Ձոն» բանաստեղծությունը Մ. Մեծարենցի «Երգ» բանաստեղծության հետ նույն արժեհամակարգային դաշտում է նաև հացի խորհրդի ընդգրկմամբ, քանի որ, ճիշտ է, ձոներգի մեջ անմիջականորեն, ուղղակիորեն հաց, ցորեն բառարտահայտությունները չեն օգտագործվում, սակայն կա դրանց հետ համընկալում հանդիսացող երգի (երգելու) խորհուրդը:

Այս առումով անհնար է խուսափել Դանիել Վարուժանի «Նացին երգը» ժողովածուի քննությունից, ավելին՝ դա դառնում է պարտադիր: Նշենք, որ Վարուժանի «Նացին երգը» ժողովածուի վերնագիրը նախապես պետք է լիներ «Նացին խոսքը»:

Խոսքի եւ հացի լեզվամրաժողական հոմանիշության այս փորձություն էլ փորձենք մասնավորեցնել Դանիել Վարուժանի «Նացին երգը» ժողովածուն:

Ձայնն ընդհանրապես եւ քաղաքակրթական ձայնը (խոսքը, երգը, նվագը) մասնավորապես, որպես կյանքի խորհուրդ, ուղեկցում են ողջ «Նացին երգը», որի բնաբանը եւս նվագ է՝ ...«Ու նրվագներս կը ծընին...»: «Արտերուն հրավերը» ողողվել է առվակների կարկաչներով. «Սառնն լուծված կկարկաչն առվակներ», «Մշակները» հագեցած են հոսուն երգով. «Ավիշներու հոսուն երգն անոնք միայն են լսած» (էջ 291), «Նարկիս»-ը լի են դաշտերի անցյալի երագով:

«Նացին երգում» հացի արարումը, իր բոլոր փուլերի բանաստեղծական նկարագրությամբ, ուղեկցվում է հենց երգով՝

Մարդը կերթա երգելով, մաճն ափին մեջ պնդաջիղ,
Ու իր ճամփան կգծե իր հոգիին պես ուղիղ...⁴:

«Ներկեր» բանաստեղծության մեջ ուշադրություն է գրավում այն իրողությունը, որ, փաստորեն, մաճ բռնած հերկ անող մարդու առջև հոգևոր-բարոյական ուղղամտության պահանջ է դրվում, կամ, որ ավելի ճիշտ է, հացի ստեղծման ողջ ընթացքը պայմանավորում է հոգու բարձր հարկանիշներով: Այլ կերպ՝ հանապաօրյա ուրելու հացն այնպիսին է, ինչպիսին այդ հացն իր տքնանքով ստեղծողի հոգին: Իր հերթին՝ հացի արարման («կգծն») ընթացքը վեր է ածվում հոգու արարման ճանապարհի: Փաստորեն, «Նացին երգում» հացի արարման գաղափարն անբաժանելի է հոգու արարման գաղափարից, քանի որ հանգում է միաժամանակ եւ՝ կենսական հացի, եւ՝ հոգու կերակուր-հացի խորհրդին: Նաց ստեղծելը՝ վարել, ցանել, հնձել, կալսել, աղալ, թխել եւ այլն, հոգու արարելն է: «Նացին երգի» հացը նաև հոգու կերակուրն է: Ահա թե ինչու մաճկալի խոսքն ամենաբարձր դրսևորմամբ՝ երգով է արտահայտվում. նրա խոսքը երգն է՝ «հո՛,

4 Դանիել Վարուժան, Երկեր, Երևան, 1969, էջ 293:

հոռ՛, հոռ՛, հոռ՛»: Եւ ուղիղ, ուղղամիտ հոգի ունեցող աշխարավորի սրեղծած հացը դառնում է նաեւ նշխար:

Իսկ «Յան» բանաստեղծությունը պարզապես շարունակում է մեր խոսքը՝ գործնականում ջնջելով հացի ընկալման երկու՝ նյութական ու հոգեւոր բեւեռների միջեւ ընկած սահմանը.

Մշակ, ցանե՛,-հանուն Տիրոջ նշխարին
Թող մաքերեղ հորդին սերմեր լուսեղեն⁵:

Վարուժանական (այդքանով նաեւ հայերենի) լեզվամրածողական համակարգում հացը ոչ թե զուտ ֆիզիկական գոյության գրավականն է, այլ, ինչպես ասացինք, նաեւ ու հավասարապես նշխար, այսինքն՝ հոգեւոր-քրիստոնեական խորհուրդ:

Բանաստեղծության շարունակությունը պարզապես «Նացին երգի» վերաիմաստավորման պահանջ է.

Վաղը ամեն մեկ հասկի մեջ կաթնային
Պիտի հասունա մաս մ՝ Նիսուսի մարմինեն...⁶:

Իսկ Նիսուս Խոսքն է, Բանն է: Եւ հացի արարման վարուժանական-հայկական ծիսակարգում հացի երգը դառնում է նաեւ «Նիսուսի երգը», հեղեղաբարձ «Խոսքի երգը». ուրեմն ի՛նչ ասարիճանի են սխալվում նրանք, ովքեր «Նացին երգը» գուցահեռում են նախաքրիստոնեական բանաստեղծության հետ: Վարուժանի «Յան» բանաստեղծության մեջ բերված փոփոխությունները պարզապես են եւ հուշում ընդհանրապես ու միշտ, որ երբ հայերեն փոքսոլը հաց է ասում, ամեն ինչից զուր՝ անպայմանորեն մտածել է պեքսոլ դրա քրիստոնեական ընկալման մասին:

Նայերենն արձանագրել, մշակել ու պահպանել է «որսել հաց, այնքան կաց» խոսքը (փոքսոլ): Մարդկային, քաղաքակրթական հոգեւոր բարձր արժեքների հետ առաջին հայացքից չներդաշնակվող այս փոքսոլի մեկնաբանությունը կարծես պարզից էլ պարզ է. որսել ապրուստ, ուրելու բան կա, այնքան էլ մնա՛ ու ապրի՛ր: Մարդու հոգեւոր էության նկարմամբ բաց փոքսոլով այս, մեղմ ասած, արհամարհանքը, չզիպես ինչու, երբեմն պարեհ, երբեմն էլ անպարեհ առիթներով համառորեն վերհիշվում է մի լեզվի համափոքսոլում, որը համաշխարհային քաղաքակրթության հոգեւոր վերընթացին իր անուրանալի ավանդն է բերել: Ի՛նչն է պարզապես այդ համառության:

Բանն այն է, որ եթե «որսել հաց, այնքան կաց»-ը զուտ փոքսոլ լիներ, այն վաղուց ոչ ոք չէր կրկնի: Որեւէ փոքսոլ չի մոռացվում եւ ամրակայվում է փվյալ

⁵ Անդ, էջ 295:

⁶ Անդ:

լեզվի փիրություն, եթե անընդհատական ստարարում է սրանում նույն այդ լեզվի համապետքսրից: Ուրեմն՝ հայերենի համապետքսրը, չգիտես ինչու, անընդհատ ստարարում է «որտեղ հաց, այնտեղ կաց» խոսքին. խոսք, որն առաջին հայացքից, հիշեցնում ենք, չի ներդաշնակում քաղաքակրթական արժեքներին: Ի՞նչն է պարզաբան: Պարզաբան կարող է միայն մեկ բան լինել. «որտեղ հաց, այնտեղ կաց» խոսքը տեքստ լինելուց առաջ նախ համապետքսր է կամ համապետքսրի մի հատված, պարաֆրազ: Որքան էլ որպես բաց տեքստ այն կարող է վիրավորել հոգևոր բարձր արժեքներ կրող մարդու արժանապարվությունը, այնուամենայնիվ, որպես համապետքսր մղված է պահպանելու հայի քրիստոնեական հոգեբանության և լեզվամրածողության որոշակի մի հատված, որը կառուցվում է ավյալ ասացվածքի վերկենցադային, վերապարմական ու վերժամանակային ընկալման վրա: Բացատրենք: Նախ՝ ներկայացնենք այս մեկնաբանության փրամաբանությունը: Երբ Դանիել Վարուժանը, «Յան» բանաստեղծության մեջ հացը նկարի առնելով, ասում է «Պիտ հասուննա մաս մ՝ Շիտուսի մարմինն», իր տեքստը բացահայտորեն օրգանապես շաղկապում-ծուլում է աստվածաշնչյան «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը» (Մարթ. ԻԶ. 27) պարավիրանին: Երկրորդ կարծիք այստեղ լինել չի կարող: «Որտեղ հաց, այնտեղ կաց»-ը քրիստոնեական մրածողության մեջ կյանքի բանաձևումն է. այդ բանաձևը հետևյալն է. կաց-ը (այսինքն՝ լինելը, կյանքը) այնտեղ է, որտեղ հացն է: Բայց ՆԱՅԸ Քրիստոսն է, որ ասում է. «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը»: Այսինքն՝ Քրիստոսի մարմինը հացն է: Բայց Ի՞նչ է Քրիստոսի մարմինը: Տիտուս Աստծո ԲԱՆՆ է, ԽՈՍՔԸ, ուրեմն՝ Քրիստոսի մարմինը հենց Աստծո ԲԱՆՆ է, ԽՈՍՔԸ: Նայ-քրիստոնեական հոգեբանության ու լեզվամրածողության մեջ պահվում-պահպանվում է հացի ընկալման այս կարևորագույն գաղտնագիր-շերտը, որը նման կերպ գաղտնաբացելուց հետո մեզ սրիպում է «որտեղ հաց, այնտեղ կաց» հայկական ժողովրդական ասացվածքն ընթերցել հետևյալ կերպ. «Որտեղ Քրիստոսն է, այնտեղ կյանքն է», այսինքն՝ «Որտեղ Աստծո խոսքն է, այնտեղ կյանքն է», այսինքն՝ «Որտեղ խոսք (հաց), այնտեղ կյանք (կաց)»: Ուրեմն՝ Դանիել Վարուժանի «Նացին երգը» վերնագիրը «Յան» բանաստեղծության «Պիտ հասուննա մաս մ՝ Շիտուսի մարմինն» տողի օգնությամբ դառնում է նաև «Տիրոջ Խոսքի երգը»: Այս տողն այնքան ուղղակի է, որ արդեն իսկ բավարար հիմք է մեր եզրահանգման համար, սակայն «Յան» բանաստեղծության ընթերցումը շարունակելով՝ հանդիպում ենք ևս նմանաբան մի «անակնկալի», որը Վարուժանի բանաստեղծության միջոցով դարձյալ փաստում է հայերենի լեզվամրածողական համակարգի մեր բացահայտման ճշտությունը՝ հացի խորհրդի քրիստոնեական արաղձը. «Յան» բանաստեղծության հաջորդ տունն ավարտվում է հետևյալ երկրորդով:

Ծիտերն ինչ փույթ, թե հատիկներդ կավարեն.-
Տեղը Աստված պիտի մարգրիտ սերմանե:

Դժվար է ասել՝ Վարուժանի քրիստոնեական-լուսավորական հայացքն է այդ պահին ակնարկում այն մարգարիտները, որ չպետք է շաղ փայլ խոզերի առաջ, թե՛ հայկական համարաբան է «կառավարում» Վարուժանի գրիչը՝ հացը որպես Տիտուսի մարմին հիշող փողերից հետո վերականգնելու մարգարիտները խոզերի առջև շաղ չփայլու ենթադրությամբ: Երկուսն էլ: Տարբերություն չկա. հիմքը նույն լեզվամտածողությունն է, որ Վարուժանը կրում է թե՛ քրեական-գաղափարական առումով, թե՛ ենթագիտակցական-հոգեբանական, լեզվամտածողական: Լեզվամտածողական նման կառույցի էությամբ ու ձևով դրսևորվելու ընթացքը Վարուժանի փնտրումը, գուցե և հեղինակի կամքից անկախ, շարունակում է «Առաջին գիշեր» բանաստեղծության մեջ. «Ամեն ընծայող մարգարիտ մ'ունի իր բերանն...»⁷: Քանի որ խոսքը բերանում է լինում, եւ ահա այս մարգարիտը ընծայողի բերանում է, ուրեմն դա հենց աստվածաշնչյան խոսքը չէ՞ արդյոք: Խոսքն է բերանում լինում, խոսքը, ուրիշ էլ ի՞նչը:

Ահա թե ինչպես է Վարուժանի «Նացին երգը» գրքում ձայն (փնտրում, խոսք) կյանք համընկալումը, հաղթահարելով պարսկական (կենցաղային, առօրեական) ոլորտը, վերածվում հայերենի քրիստոնեական լեզվամտածողության համարաբանային մի հարվածի:

«Նացին երգը» գրքի «Կալերուն գիշեր» բանաստեղծության վերջին տունն իր՝

«Եւ այսպես՝ օր մը պառկած փողփողումին փակ երկնի
Իմ ծնողներս մըշակ՝ զիս հղացան կաթոգին»⁸,

փողերով ենթագիտակցական-համարաբանային մի ակնարկ է այն իրողության, որ մարդն ինքը (փվյալ դեպքում՝ բանաստեղծության հեղինակը) ծնունդ է այն ընթացքի, որ հացի արարումն է, ծնողները զավակ են հղանում կալերում, ուր հացն է հավաքվում.

Զիս հղացա՛ն, սուեռած իրենց աչքերը բարի
Վերն ամենեն մեծ Աստվծին, ամենավառ Տրայրքին⁹:

Զուգորդությունը, «Եւ ահա այն աստղը, որ փնտել էին արեւելքում, առաջնորդեց նրանց, մինչև որ եկավ կանգնեց այն փեղի վրա, ուր մանուկն էր» (Մատթ. Բ. 9), խոսքի հետ անհնար է չարձանագրել: Վարուժանն «իր» Աստղը մեծապարծով է գրել, որովհետև դրա հետ է շաղկապվում իր ծնունդը, ինչպես որ Կենաց հաց Տիտուսի ծնունդն է առնչվում հիշյալ աստղին: «Ես եմ կենդանի հացը, որ

7 Անդ, էջ 298:

8 Անդ, էջ 217:

9 Անդ:

երկնքից է իջած. թե մեկն այս հացից ուրի, հավիլենապես կապրի. եւ այն հացը, որ կրամ, իմ մարմինն է, որը եւս կրամ աշխարհի կյանքի համար» (Նովի. Զ. 51-52): Վարուժանի բանաստեղծության մեջ մանուկը ծնվում է այնպեղ, որպեղ հացն է՝ կալերում, ծնվում է ամենամեծ Աստղի հովանու ներքո, ինչպես Շիսուս, որ կյանքի հացն է:

Շիսուսի եւ վարուժանական բանաստեղծության մեջ մանկան ծնունդի համարեքսպային այս գաղղրնառնչությունն է փոխում Վարուժանի «Նացին երգի» հացի «համը». այդ հացից Շիսուսի, նրա խոսքի բույրն է գալիս:

Եւ «Կալերու գիշեր»-ին անմիջապես հաջորդում է «Խաչքում» բանաստեղծությունը՝ որպես վավերական կնիքն այս ամենի: Ինչպե՛ս է հյուսվում հացը՝ ցորենի հասկերը.

Ես հյուսեցի գանոնը, գիսակ առ գիսակ,
Տալով խաչին ձեւը Որդվույդ կարեւր,
Որուն արյունն, ամեն Զարկի, սո՛րբ կրթակ,
Մեր ակոսներն են խմեր:

Նաջորդող «Կամներգ» բանաստեղծությունում արղեն միախառնվում են հացն ու երգը, հացն ու խոսքը.

Նորձանքին մեջ աշխետր հուձքին
Ես կը լողամ երգերուս հետ...¹⁰:

Եւ եթե արղեն իրավունք ունենք պղղելու, որ Վարուժանի հացը Շիսուս-հացի մի պարառն է, ու Շիսուսն էլ Խոսքն է, քրամաբանական շղթան փակվում է. խոսքը միախառնվում է խոսքին (հող էր, հող դարձավ), այսինքն՝ «Նացին երգում» միախառնվում են Աստծո Խոսքն ու Վարուժանի խոսքը՝ որպես հայերենի լեզվամրաձողական համակարգի համարեքսպային անարարալուծելի միասնական իրողություն:

Խոսքը՝ հաց. սա է հայ ժողովրդի կենսաընկալումը: Նացի արարման վարուժանական կառույցը փաստում է հայերենի՝ հացը որպես խոսք եւ խոսքը որպես հաց քրիստոնեական ընկալումը: Եւ ամենեւին պարահական չէ, որ Վարուժանն իր «Նացին երգը» նախապես մրադրված է եղել անվանելու «Նացին խոսքը»:

¹⁰ Անդ, էջ 320:

РЕЗЮМЕ

В нескольких статьях посвященных свойствам языкового мышления автор этой статьи выдвигал идею синонимов в языковом мышлении. Синоним в языковом мышлении и лингвистические синонимы различаются тем, что с первого взгляда ничем не связанные явления могут иметь непосредственную связь в сфере языкового мышления. В армянском языке, по мнению автора статьи, таковы, например, понятия “речь” и “хлеб”. При том, факт, что две такие понятия являются синонимами в плане языкового мышления автор статьи доказывает, сопоставляя их хронические восприятия с их восприятием вне времени. В книге “Песня хлеба” поэта Даниела Варужана система такого языкового мышления в армянском языке выявляется в полной мере. Варужан является основоположником языческого движения в армянской литературе, но изучение его речи в плане языкового мышления доказывает, что в варужановской поэзии доминирует христианская психология.

SUMMARY

In this article, as in previous publications, author proposes the idea of synonymy in lingual-thinking which is different from linguistic synonymy.

It is found that at first sight unrelated phenomena can have direct relationship in some domain. According to Daniel Varoujan in armenian language, for instance, the concepts “bread” and “speech” have such relationship. Varoujan demonstrates lingual-thinking synonym of those concepts by comparing their temporal and over-time perceptions.

Speech as Bread: this is the life’s perception for Armenian nation. Varoujan’s lingual-thinking structure of bread creation proves that Armenian bread perceives as speech and speech perceives as bread. This is Christian (typical) perception, because Jesus himself presents as bread come down from sky.

In “Hatsin Yerg” God’s speech and Varoujan’s speech interflow and become an indissoluble unity in Armenian lingual thinking system.

And in the Varoujan’s (Armenians’) rite of creating bread the song of bread becomes also a song of Jesus, therefore - the song of speech.

The article also attempts to identify the way of Varoujan lingual-thinking (lingual perceptions), who is famous as father and leader of pagan movement in armenian poetry.